Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Լճաշեն գյուղի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Երաժշտություն» /8 դասաժամ/, «Ֆիզկուլտուրա» /7 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթը (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2024 թվականի հունվարի 17-ից մինչև հունվարի 30-ը ներառյալ, ամեն օր ՝ժամը 10.00-ից 14.00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թվականի փետրվարի 5-ին՝ ժամը 12:00-ին** /երաժշտություն/, ժամը 14.30-ին /ֆիզկուլտուրա/ ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի Ա. Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Լճաշեն, 24-րդ փողոց, 1-ին նրբանցք, N:3 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 0261 2-70-82 կամ 077 50 27 47հեռախոսահամարներով: